

Թ Ղ Թ Ա Տ Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Մալորական նամակներ. — Պէտք է գրել նամակին հասցէն շատ յստակ կերպով եւ մեկանով: Սոհեմութիւն է պահարանին ետեւը գրել ձեր իսկ հասցէն . այս կերպով , եթէ այն անձը , որուն ուղղած էք ձեր նամակը , չգտնուի՝ թղթատարութիւնը կը վերադարձնէ ձեզի ձեր նամակը , որ այսպէս կորսուելու վտանգէն զերծ կը մնայ :

Թղթատարական Միութեան (Իթթիհաս, Union Postale) մէջ գտնուող երկիրներուն համար 15 կոստ կամ աւելի պակաս կշռող նամակի մը վրայ պէտք է գնել 1 դրուշի թղթադրոշմ . 15 կոստէն աւելի կշռող նամակներուն վրայ , իւրաքանչիւր 15 կոստի կամ աւելի պակաս քանակութեան համար , պէտք է աւելցնել 1 դրուշի թղթադրոշմ : Նոյնպէս Թուրքիոյ ներքին թղթատարութեան մէջ նամակները ենթակայ են 1 դրուշ թղթադրոշմի՝ իւրաքանչիւր 15 կոստի համար : Բացառիկ են նաւահանգիստները . այս պարագային՝ 20 փարայի թղթադրոշմ միայն պէտք է փակցնել (տե՛ս Յուցակ էջ 320-321) :

Եթէ նամակի մը վրայ թղթադրոշմ չգնելով յանձնած ենք թղթատարին , թղթատարութիւնը տեղը կը հասցնէ զայն եւ նամակը ընդունողը կը հարկադրուի վճարել կրկինը . իսկ եթէ դրուած թղթադրոշմը պէտք եղածէն պակաս է , պակաս մասին միայն կրկինը կը վճարէ :

Թղթատարական Բարտեր (Cartes postales). — Պարզ թղթատարական քարտի մը գինն է 20 փարա , իսկ վճարեալ պատասխանով թղթատարական քարտերու գինը 1 դրուշ :

Վաճառքի նմոյշներ (Էմքաաի քիւննարիյե նիւնու-
նեղերի, échantillons des marchandises). — Վաճառքի
նմոյշ կը նկատուին ապրանքի մը այն փոքրիկ մասերը
որոնք կը ծառայեն ապրանքին տեսակը եւ յատկութիւնը
ճանչցնելու, եւ որոնք չեն կրնար ինքնին առուտուրի
առարկայ ըլլալ իրենց փոքր քանակութեան պատճառաւ:
Այսպէս են ցորենի հասիկներ, սերմեր, պղպեղ, ալիւր,
թեյի տերեւներ, քամբակ, բուրդ, երկաթ, զինկ, կեր-
պաս, ասուի, եւայլն, եւայլն: Հեղուկներն ալ, ինչ-
պէս իւղերը, եւայլն, կրնան զրկուիլ իրր նմոյշ, ի բաց
առեալ Ռուսիա, Պարսկաստան, Ամերիկա, Մեծն Բրի-
տանիա:

Թղթատարական Միութեան համար վաճառքի նմոյշ-
ներէն կ'առնուի 20 փարա, 1 կուամէն մինչեւ 100 կուամ,
եւ 100 կուամէն վեր իւրաքանչիւր 50 կուամի 10 փարա
Եթէ նմոյշին ծանրութիւնը 350 կուամը անցնի, կամ
եթէ 30 սանդղիմէդր երկայնութենէ, 20 սանդղիմէդր լայն-
քէ եւ տասը սանդղիմէդր թանձրութենէ աւելի ըլլայ,
կը մերժուի: Թուրքիոյ մէջ վաճառքի նմոյշներուն
համար նոյն բանն է, սա տարբերութեամբ որ մինչեւ
2000 կուամ կ'ընդունուին: Ծովեզերեայ քաղաքներուն
համար անձնիւր 75 կուամի համար 10 փարա աւելի
կ'առնուի, փոխանակ 50 կուամի: Եթէ նմոյշին ծան-
րութիւնը 250 կուամը անցնի, անձնիւր 50 կուամի հա-
մար 20 փարա կ'առնուի մինչեւ 2 քիլոկրամ (տե՛ս
Ցուցակ էջ 320-321):

Եթէ վաճառքի նմոյշի մը վրայ թղթադրոշմ գրուած
չէ, չի զրկուիր: Եթէ պակաս գրուած է, կը զրկուի եւ
պակաս գրուածին կրկինը կ'առնուի ընդունողէն:

Տպագիրներ (Էվրագը մարպուա, imprimés). — Հե-
տեւեալները տպագիրներու կարգը դասուած են եւ զեղ-
չուած գիներով կը զրկուին. յրագիրներ եւ պարբերա-

կաններ, կազմուած կամ անկազմ զիւրեր, սեւրակներ, երաժշտական հասուածներ, այցաբարեր, սպագրական փորձեր (ձեռագրով կամ առանց ձեռագրի), վիճագրութիւններ, շուսանկարներ, պատկերներ, գծագրութիւններ, յատկագիծեր, աշխարհագրական քարտեզներ, ցուցակներ, զանազան ազդեր, եւ ընդհանրապէս բոլոր ինչ որ սպագրուած է :

Թղթատարական Միութեան մէջ զանուոյ երկիրներուն համար 50 կուամ կամ աւելի պակաս կշտոյ տպագիրներուն կը վճարուի 10 փարա . 50 կուամէ աւելի կշտոյ տպագիրներուն վրայ անձնիւր 50 կուամի կամ աւելի պակաս քանակութեան համար պէտք է աւելցնել 10 փարա : Նոյնպէս Թուրքիոյ ներքին թղթատարութեան համար տպագիրները ենթակայ են 10 փարա թղթագրոջմի, իւրաքանչիւր 50 կուամի : Երբ ծրարը 30 կուամէ պակաս կը կշտէ, 5 փարա միայն կը վճարուի : Ծովեզերեայ քաղաքներու համար անձնիւր 75 կուամի 10 փարա կ'առնուի (տե՛ս Յուլի 15 320-321) :

2000 կուամէ աւելի կշտոյ կամ 45 սանդիմէզրէ աւելի երկայնութիւն, լայնութիւն կամ թանձրութիւն ունեցող ծրարներ չեն ընդունուիր. 10 սանդիմէզր արամագիծ եւ 75 սանդիմէզր երկայնութիւն ունեցող պլորուած տպագիրներ կ'ընդունուին :

Եթէ տպագրի մը վրայ ընաւ թղթագրոջմ գրուած չէ, չի զրկուիր. եթէ պակաս գրուած է, կը զրկուի եւ պակաս գրուածին կրկինը կ'առնուի ընդունողէն :

Երբ տպագիրներու ծրար մը կը պարունակէ նամակ կամ ձեռագիր նօթագրութիւններ, չի յանձնուիր, եւ ես կը զրկուի : Բացառութիւն . 1. Գրքի մը հեղինակը կըրնայ ձօն մը գրել այդ գրքին վրայ . 2. Ղրկողը կրնայ ստորագրել եւ իր հասցեն գրել ձեռքով . 3. Գիներու ցուցակի մը կամ ուրիշ անսկզբի սկզբ գրուածքի մը վրայ

կարելի է փոխել կամ աւելցնել քուսնիւններ կամ քուսներ . 4. Կարելի է գիծ ֆաշելով ուշադրութիւն գրակն մասնաւոր հասուածի մը վրայ . 5. Ներելի է սպագրական սխալները ձեռնով ուղղել , եւայլն :

Գործի քուղբեր (էվրագը մեքայիհ , papiers d'affaires) . — Գործի քուղբեր կը կոչուին այն բոլոր թուղթերը , գրուած կամ գծադրուած , որոնք անմիջական թղթակցութեան մը նկարագիրը չունին , ինչպէս դասավարութեան քուղբեր , վկայագիրներ , կաշուածագիրներ , փոխանակագիրներ , բեռնագիրներ (+շէշէ-էշէ-էշէ) , հաշուեցուցակներ (§-ը--ը-), ապահովագրական ընկերութեանց վերաբերեալ կարգ մը քուղբեր , ձեռագիր երաժշտական հասուածներ , գիրքերու ձեռագիրներ եւ դրագիրներու յասկացուած ձեռագիրներ՝ անջասարար կրկնուած , եւայլն , եւայլն :

Թղթատարական Միութեան մէջ գանուող երկիրներուն համար գործի թուղթերէ կը ստացուի 1 գրուշ՝ 1 կոամէ մինչեւ 200 կոամ կշտող ծրարներէ : Իսկ 200 կոամէ աւելի կշտող ծրարները ենթակայ են տասնական փարս յաւելուածի՝ ամէն 50 կոամի յաւելման . առ առաւելն 2000 կրամ կշտող գործի թուղթերու ծրարներ միայն կ'ընդունուին : Թուրքիոյ ներքին թղթատարութեան համար նոյն բանն է (տե՛ս Տուցակ էջ 320-321) :

Եթէ գործի թուղթերու վրայ բնաւ թղթագրուած գրուած չէ , չեն գրկուիր . եթէ պակաս գրուած է , կը զբրկուին եւ պակաս գրուածին կրկինը կ'ամսուի ընդունողէն :

Ծրարներու մէջ նամակ կամ նօթագրութիւն չպարունակելու պայմանները , ինչպէս ծրարներու ծանրութեան եւ ընդարձակութեան պայմանները գործի թուղթերու համար ալ տպագիրներու յար եւ նման են :

Թանկագին նիւթեր . — Արգիլուած է թղթատարի յանձնել մաքուր չվնարուած քանկագին նիւթեր , եւայլն :

Գրամի եւ արժեքաւոր նիւթերու փոխադրութիւն . — Թղթատարական միութեան մէջ գտնուած երկիրներուն համար օտմանեան թղթատարութիւնը չ'ընդունիր աւանդ (եւանկթ), ոչ ալ մանաա-բոսդ :

Թուրքիոյ ներքին թղթատարութեան մէջ ընդունուած է գրամի եւ արժեքաւոր նիւթերու փոխադրութիւնը աւանդի ձեւին սակ : Այս պարագային թղթատարական վարչութիւնը կը ստանայ քանկագին նիւթերու համար արժեքին հաւնաձայն սակագին մը , իսկ հասարակ նիւթերու համար ծանրութեան չափով սակագին մը : Այս սակագինը հինգ աստիճան է , հեռաւորութեան հինգ շրջանակներու հաւնաձայն՝ որոնք հետեւեալներն են .

Ա. Երջանակ . — Կ. Պոլիս եւ շրջակաները . կը վճարուի արժեքաւոր նիւթերու համար, 1էն 1000 գրուշի՝ $2\frac{1}{2}$ գրուշ . 1000 գրուշէն 2000 գրուշի՝ 5 գրուշ , եւ ամէն 1000 գրուշի $2\frac{1}{2}$ գրուշ : Ծանրութիւն ունեցող նիւթերու համար 1էն 500 կրամի՝ $2\frac{1}{2}$ գրուշ , եւ 501էն 1000 կրամի 5 գրուշ , եւ ամէն 500 կրամի $2\frac{1}{2}$ գրուշ :

Բ. Երջանակ . — Պրուսա , Գապթէմունի , Այտըն , Ատանա , Ճէպէլի-Լիպնան , Հալէպ , Գոնիա , Եքստրա , Կարմիր Ծովի եզերքներ , Պէնկագլի , Պիզա , Արշիպեղազոսի կղզիներ : Այս վայրերը կը փոխադրութիւն արժեքաւոր նիւթեր . 1էն 250 գրուշ՝ $2\frac{1}{2}$ գրուշի , 251էն 500՝ 3 գրուշի , 501էն 1000՝ 7 գրուշի . ասկէ վեր հազարներու համար իւրաքանչիւրին վրայ կ'աւելնայ $3\frac{1}{2}$ գրուշ : Ծանրութիւն ունեցող նիւթեր . 1է 100 կրամ՝ $2\frac{1}{2}$ գրուշի , 101էն 250 կրամ՝ 3 գրուշի , 251էն 500՝ 4 գրուշի , եւ 501էն 1000 կրամ՝ 7 գրուշի՝ եւ իւրաքանչիւր 500 կրամի՝ $3\frac{1}{2}$ գրուշի յաւելում :

Գ. Երջանակ . — Գամասկոս , Էրզրում , Հիճազ , Էնգարէ , Սըվազ , Գոսովա , Մանասթըր , Եէմէն , Տիարպէքիւր , Խարբերդ : Արժեք . 1էն 250 գրուշ՝ 3 գրուշի ,

251էն 500՝ 4 դրուշի, 501էն 1000՝ 6 դրուշի եւ իւրաքանչիւր 1000ի վրայ 5 դրուշի յաւելում: Ծանրութիւն . 1էն 100 կրամ՝ 3 դրուշի, 101էն 250 կրամ՝ 4 դրուշի, 251էն 500՝ 6 դրուշի, 501էն 1000՝ 10 դրուշի, եւ իւրաքանչիւր 500ի վրայ 5 դրուշի յաւելում:

Դ. Շրջանակ. — Վան, Պիլիլիս, Մուսուլ: Արժեք . 1էն 250 դրուշ՝ $3\frac{1}{2}$ դրուշի, 250էն 500՝ 5 դրուշի, 501էն 1000՝ 8 դրուշի եւ իւրաքանչիւր 1000ի վրայ $6\frac{1}{2}$ դրուշի յաւելում: Ծանրութիւն . 1էն 100 կրամ՝ 3 դրուշի, 101 էն 250՝ 5 դրուշի, 251 էն 500՝ 8 դրուշի, 501 էն 1000՝ 13 դրուշի, եւ իւրաքանչիւր կրամի վրայ $6\frac{1}{2}$ դրուշ յաւելում:

Ե. Շրջանակ. — Պաղատա, Պատրա: Արժեք . 1էն 250 կրամ՝ 4 դրուշի, 251էն 500՝ 6 դրուշի, 501 էն 1000՝ 10 դրուշի, եւ իւրաքանչիւր 1000ի վրայ 8 դրուշի յաւելում: Ծանրութիւն . 1էն 100 կրամ՝ 4 դրուշի, 101էն 250՝ 6 դրուշի, 251էն 500՝ 10 դրուշի, 501 էն 1000՝ 16 դրուշի, եւ իւրաքանչիւր 500ի վրայ 8 դրուշ յաւելում: Ծովեզերեայ քաղաքները 1000ին 2 դրուշ կ'անուռի, իսկ երկաթուղի բանած քաղաքները 1000ին 3 դրուշ: Ասոնց մէջ երբեք ծանրութիւնը նկատողութեան չաննուիր:

Ընդունելութեան գեկուցագիր (Իւսեկ իլնուխասպերի, avis de réception). — Ընդունելութեան գեկուցագիր կը կոչուի թուղթ մը՝ զոր կը ստորագրէ այն անձը որուն ուղղուած է նամակը եւ որով կը հաստատուի թէ նամակը իր ձեռքը հասած է: Ընդունելութեան գեկուցագիրը, ընդունողէն ստորագրուելէ ետքը, կը վերագարծուի նամակը զրկողին: Ընդունելութեան գեկուցագիրներու, թէ՛ թղթատարական Միութեան շրջանակին եւ թէ՛ թուրքիոյ համար, պէտք է վճարել միօրինակ կերպով 1 դրուշ, յանձնարարման համար վճարուած մէկ դրուշէն զատ:

ԹՂԹԱՏԱՐԱԿԱՆ

ԳԻՆԵՐՈՒ ՑՈՒՑԱԿ

ՆԱՄԱԿՆԵՐ					ՏՊԱԳԻՐՆԵՐ ԵՒ ԳՈՐԾԻ ԹՈՒՂԹԵՐ				ՎԱՃԱՌՔԻ		ՆՄՈՅՆԵՐ					ՏՊԱԳԻՐՆԵՐ			ԳՈՐԾԻ ԹՈՒՂԹԵՐ				
ԾՈՎԵՉՐ			ՆԵՐՔԻՆ ԵՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ		ԾՈՎԵՉՐ	ՆԵՐՔԻՆ			ՄԻՋԱԶԳԱ		ՑԻՆ	ԾՈՎԵՉՐ	ՆԵՐՔԻՆ			ՄԻՋԱԶԳԱՅԻՆ			ՄԻՋԱԶԳԱՅԻՆ				
ԿՈՍՄ	ՂՐԶ	ՓՐ	ՂՐԶ	ՓՐ		ԿՈՍՄ	ԿՈՍՄ	ՂՐԶ					ՓՐ	ԿՈՍՄ	ԿՈՍՄ							ՂՐԶ	ՓՐ
15		20	1		30	30		5	20		20	30	30		5	50		10	50		1		
30	1		2		75	50		10	100		20	75	50		10	100		20	100		1		
45	1	20	3		150	100		20	150		30	150	100		20	150		30	150		1		
60	2		4		235	150		30	200	1	40	225	150		30	200	1	40	200		1		
75	2	20	5		300	200	1		250	1	20	200	200	1		250	1	10	250		1	10	
90	3		6		375	250	1	10	300	1	30	250	250	1	10	300	1	20	300		1	20	
105	3	20	7		450	300	1	20	350	1	40	300	300	3	20	350	1	30	350		1	30	
120	4		8		525	350	1	30			50	350	350	3	20	400	2	2	400		2		
135	4	20	9		600	400	2				100	400	400	4	20	450	2	10	450		2	10	
150	5		10		675	450	2	10			200	450	450	4	20	500	2	20	500		2	20	
165	5	20	11		750	500	2	20			300	500	500	5	20	550	2	30	550		2	30	
180	6		12		825	550	2	30			400	550	550	5	20	600	3		600		3		
195	6	20	13		900	600	3				500	600	600	6	20	650	3	10	650		3	10	
210	7		14		975	650	3	10			600	650	650	6	20	700	3	20	700		3	20	
225	7	20	15		1050	700	3	20			700	700	700	7	20	750	3	30	750		3	30	
240	8		16		1125	750	3	30			800	750	750	7	20	800	4		800		4		
255	8	20	17		1200	800	4				900	800	800	8	20	850	4	10	850		4	10	
270	9		18		1275	850	4	10			1000	850	850	8	20	900	4	20	900		4	20	
285	9	20	19		1350	900	4	20			1100	900	900	9	20	950	4	30	950		4	30	
300	10		20		1425	950	4	30			1200	950	950	9	20	1000	5		1000		5		
315	10	20	21		1500	1000	5				1300	1000	1000	10	20	1050	5	10	1050		5	10	
330	11		22		1575	1050	5	10			1400	1050	1050	10	20	1100	5	20	1100		5	20	
345	11	20	23		1650	1100	5	20			1500	1100	1100	11	20	1150	5	30	1150		5	30	
360	12		24		1725	1150	5	30			1600	1150	1150	11	20	1200	6		1200		6		
375	12	20	25		1800	1200	6				1700	1200	1200	12	20	1250	6	10	1250		6	10	
390	13		26		1875	1250	6	10			1800	1250	1250	12	20	1300	6	20	1300		6	20	
405	13	20	27		1950	1300	6	20			1900	1300	1300	13	20	1350	6	30	1350		6	30	
420	14		28		2000	1350	6	30			2000	1350	1350	13	20	1400	7		1400		7		
435	14	20	29			1400	7				2100	1400	1400	14	20	1450	7	10	1450		7	10	
450	15		30			1450	7	10			2200	1450	1450	14	20	1500	7	20	1500		7	20	
465	15	20	31			1500	7	20			2300	1500	1500	15	20	1550	7	30	1550		7	30	
480	16		32			1550	7	30			2400	1550	1550	15	20	1600	8		1600		8		
495	16	20	33			1600	8				2500	1600	1600	16	20	1650	8	10	1650		8	10	
510	17		34			1650	8	10			2600	1650	1650	16	20	1700	8	20	1700		8	20	
525	17	20	35			1700	8	20			2700	1700	1700	17	20	1750	8	30	1750		8	30	
540	18		36			1750	8	30			2800	1750	1750	17	20	1800	9		1800		9		
555	18	20	37			1800	9				2900	1800	1800	18	20	1850	9	10	1850		9	10	
570	19		38			1850	9	10			3000	1850	1850	18	20	1900	9	20	1900		9	20	
585	19	20	39			1900	9	20			3100	1900	1900	19	20	1950	9	30	1950		9	30	
600	20		40			1950	9	30			3200	1950	1950	19	20	2000	10		2000		10		
615	20	20	41			2000	10				3300	2000	2000	20									
630	21		42								3400												
645	21	20	43								3500												

ԵՆ ԱՆԵԼԻ

ԱՆՈՒՄ-
ԷԼԻՆ

ԱՆՈՒՄ-
ԷԼԻՆ

ԱՆՈՒՄ-
ԷԼԻՆ

ԱՆՈՒՄ-
ԷԼԻՆ

ԱՆՈՒՄ-
ԷԼԻՆ

Յանձնարարութիւն (*Թահիւտ*, *recommandation*). — Թղթատարի միջոցաւ փոխադրելի բոլոր առարկաները, ինչպէս նամակներ, թղթատարական քարտեր, տպագիրներ, գործի թուղթեր, ասլրանքի նմոյշներ կրնան յանձնարարուիլ :

Յանձնարարեալ առարկաներու համար պէտք է վճարել նախ ինչ որ պիտի վճարուէր՝ եթէ յանձնարարեալ չըլլային . յետոյ միօրինակ կերպով պէտք է վճարել 1 դրուշ իբր յանձնարարման գին :

Յանձնարարեալ առարկաներու համար, յանձնարարման պահուն իսկ պէտք է վճարել փոխադրութեան բոլոր ծախքը :

Երբ յանձնարարեալ նամակ մը կորսուի, եթէ կը վերաբերի Թղթատարական Միութեան, 50 ֆրանք փոխարինութիւն կը վճարուի թղթատարութեան կողմէ, իսկ եթէ կը վերաբերի Թուրքիոյ ներքին թղթատարութեան՝ 200 դրուշ :

Մանսա - բոսդ. — Մանսա բոսդի դրութիւնը 1900 օգոստոս 1էն սկսած է ի գործ դրուիլ Թուրքիոյ ծովագերեայ քաղաքներու, եւ երկաթուղւոյ գիծերու վրայի քաղաքներու նամակատուններուն մէջ : Ղրկողին տրուելիք ստացագրին վրայ 10 փարանոց դրոշմաթուղթ պիտի փակցուի . իսկ մանտա-բոսդերը եւ անոնց յարակից թուղթերը զերծ պիտի ըլլան դրոշմաթուղթէ : — Երկու հազար դրուշէն աւելի գումարի համար մանտա-բոսդ պիտի չտրուի : Մինչեւ 100 դրուշի համար 20 փարա վարձք պիտի առնուի : Իւրաքանչիւր 100 դրուշէն քսան փարայի հաշուով 500 դրուշէն հարիւր փարա պիտի առնուի . իսկ 500էն մինչեւ 1900 դրուշ, իւրաքանչիւր 200ին քսանական փարա պիտի աւելցուի, որով 1900էն մինչեւ 2000 դրուշ՝ վարձքը պիտի ըլլայ վեց ու կէս դրուշ :

Արժէքը յայտարարուած պարու ցակութեամբ ցամակներ (Գրչլեկըրը մուզսսերէշի մեքեարիպ) . — 1900 տարուոյ մէջ օսմանեան թղթատարութիւնը , ծովեղերեայ քաղաքներու , ինչպէս նաեւ երկաթուղւոյ գիծերուն վրայի քաղաքներու նամակատուներուն մէջ , սկսած է ընդունիլ այս կարգի նամակներ . ասոնք կը պարունակեն պանքնոթներ , արժէթուղթեր եւ այս կարգի թուղթեր , որոնց արժէքը նշանակուած պէտք է ըլլայ թուանշանով եւ գրով պահարանին վրայ : Այս նամակները առ նուազն 5 տեղէն կնքուելու են զրկողին անձնական կնիքով եւ կամ մասնաւոր նշան կրող կնիքով մը : Իւրաքանչիւր նամակի պարունակութիւնը 50,000 դրուշէ աւելի չի կրնար ըլլալ (ոսկին 100 դրուշի հաշուով), սակայն միեւնոյն թղթատարով միեւնոյն անձը կրնայ մէկէ աւելի նամակներ զրկել : Այս նամակներուն համար նախ կը վճարուի նամակին ծանրութեան համեմատ թղթագրոշմ , 1 դրուշ ապահովագրութեան համար եւ յայտարարուած արժէքին իւրաքանչիւր 1000 դրուշին ու կոտորակին համար 1 դրուշ : Այս նամակներուն փոխարէն՝ զրկողին ստացազիր պիտի արուի : Երբ արժէքը յայտարարուած պարունակութեամբ նամակ մը կորսուի , կամ մնասուի կամ գողցուի , այդ արժէքին փոխարէնը օսմանեան թղթատարութեան կողմէ պիտի վճարուի , ի բաց առեալ անխուսափելի կերպով հարկեցուցիչ պարագաները (սեփ ու իզպլէսի դայըր զապիզ կսպապը մուճպիրե , cas de force majeure) : Այս մասին ըլլալիք յայտարարութիւնները առ նուազն մէկ տարուան մէջ պէտք է տեղի ունենան , որովհետեւ անկէ ետքը նկատողութեան չեն առնուիր :

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ը

Կ Ա Ն Ո Ն Ն Ե Ր

Հեռագրին ժամը. — Թուրքիոյ քաղաքներուն միջեւ թուրք տառերով փոխանակուած հեռագիրներուն համար, թրքական ժամը կը գործածուի Թուրքիոյ հեռագրատուններուն մէջ : Իսկ միջազգային հեռագիրներուն եւ լատին տառերով զարնուած ներքին հեռագիրներուն համար՝ Կ. Պոլսոյ Միջօրէականին ժամը կը գործածուի, որ 1 ժամ, 47 վայրկեան, 32 երկվայրկեան առաջ է Բարիզի Միջօրէականին ժամէն :

Հեռագրին անսաքիւր. — Թուրքերէն տառերով քաջուած հեռագիրներուն համար, Թուրքիոյ հեռագրատունները հին տամարը կը գործածեն, եւ լատին տառերով քաջուած հեռագիրներուն համար նոր տամարը :

Հեռագրին շեղումն. — Միջազգային եւ ներքին հեռագիրներուն համար թուրքերէնէ եւ ֆրանսերէնէ զատ կարելի է նաեւ հեռագրել լատին տառերով եւ արաբերէն, պարսկերէն, հայերէն, յունարէն, սերպերէն, ռումաներէն, պուլկարերէն, ռուսերէն, անգլիերէն, գերմաներէն, իտալերէն, սպաներէն, լատիներէն եւ ուրիշ 22 ծանօթ լեզուներու վերաբերեալ բառերով :

Ստորագրութիւնն. — Հեռագրատուններուն յանձնուած հեռագիրները, թէ՛ ներքին եւ թէ՛ միջազգային, պէտք է ստորագրուած ըլլան. ներքին հեռագիրները իրենց ստորագրութեամբ կը զարնուին, իսկ միջազգայինները կրնան առանց ստորագրութեան զարնուիլ եթէ զրկողը այնպէս ուզէ :

Կարճ կամ պայմանադրական հասցե . — Այն ան-
ձերը որոնք շատ հեռագիր կը ստանան կրնան զիմել ի-
րենց գանձուած քաղաքին հեռագրատան եւ անոր հետ
համաձայնութեամբ որոշել կարն կամ պայմանադրա-
կան (*) հասցէ մը . ասոր համար պէտք է վճարել 100
ֆրանք տարեկան, 50 ֆրանք վեցամսեայ կամ 25 ֆրանք
եռամսեայ :

Ատացազիր . — Եթէ զրկողը ուզէ , հեռագրատան
կողմէ՝ հեռագրին յանձնուած ըլլալը հաստատող ստա-
ցազիր կը տրուի : Այս ստացազրին համար 1 զրոյ, կ'առ-
նուի՝ եթէ ներքին հեռագիր է , եւ 25 օանթիմ՝ եթէ
միջազգային հեռագիր է : Այս ստացազիրը ենթակայ
է 10 փարայի սովորական դրոշմատուրքի :

Հեռագրիկն յանձնուելը . — Հեռագրատան ցրուիչ-
ները ստիպուած չեն հեռագիրը յանձնել բուն իսկ
այն անձին ձեռքը , որուն ուղղուած է հեռագիրը . կրը-
նան յանձնել զայն իրեն կամ իր առնը , ազգականնե-
րուն , ծառաներու , եւայլն , ստացազիր առնելով :

Ատուրգական (urgent) հեռագիր . — Կարելի է ստի-
պողական հեռագիր մը զարնել , թէ՛ միջազգային եւ
թէ՛ ներքին , եռադատիկ գին վճարելով : Ասոր համար
հեռագրին վրայ հասցէէն առաջ պէտք է գրել միւսքանեկ
տիր կամ urgent բառերը :

Պատասխանը վճարուած հեռագիր (réponse payée) .
— Հեռագիր զարնող մը կրնայ հեռագրատան յանձնել իր
սպասած պատասխանին գինը մինչեւ 30 րոս , եւ այս-
պէս վճարուած պատասխանով հեռագիր ստացողը կրնայ
պատասխանել առանց ո եւ է գումար մը վճարելու :

(*) Օրինակի համար՝ Առաջիկ Մարգարեանի տեղ՝ Առմարգ, Մար-
տիրոս Յակոբեանի տեղ՝ Յակմար, եայլն :

Ստացման զեկուզացիր (վիւսուլ իւրուխապերի accusé de réception) . — Երբ հեռագիր մը զարնողը ուզէ հասկընալ թէ իր զարկած հեռագիրը ե՞րբ յանձնուած է անոր որուն ուղղուած է , կրնայ այս տեղեկութիւնը առնել հեռագրատունէն , վճարելով 10 բառի գին եւ հասցէէն առաջ գրելով վիւսուլ իւրուխապերի կամ accusé de réception :

Հեռագրի մը զանազան օրինակները . — Եթէ ուղուի մի եւ նոյն հեռագիրը քանի մը օրինակ ընել տալ եւ զանազան անձերու հաղորդել մէկ քաղաքի մէջ , պէտք է վճարել ներքին հեռագիրներու համար իւրաքանչիւր օրինակին (ի բաց առեալ բնագիրը) , 20 բառի $2\frac{1}{2}$ դրուշ , եւ 5 դրուշ երբ սխալողական են :

Հեռագրատուն չեղած տեղեր . — Կարելի է հեռագիր զրկել այնպիսի տեղ մը ուր հեռագրատուն չկայ , տեղւոյն մերձաւորացոյն հեռագրատան ուղղելով . հոնկէ թղթատարութեան կը յանձնուի հեռագիրը եւ առանց ո եւ է ծախքի կը զրկուի հասցէին : Սակայն եթէ հեռագիր զարնողը պահանջէ , կարելի է մասնաւոր թըղթատարի մը միջոցաւ հեռագիրը զրկել տալ իր հասցէին . թուրքիոյ հեռագրատունները ստիպուած են ընդունիլ այս կարգի ներքին հեռագիրները , զանձելով հեռագիրը զրկողէն 7 դրուշ իւրաքանչիւր ժամ հեռաւորութեան համար՝ հեռագրատունէն մինչեւ հեռագրին զրկուած տեղը : Այս հեռագիրներուն մէջ պէտք է նշանակուի , հասցէէն առաջ , իր մասնաւոր թղթատարի ծախք վճարուած գումարին քանակութիւնը :

Ս Ա Ա Գ Ի Ն Ն Ե Բ

Սակագին Կ. Պոչտոյ համար . — Կոստանդնուպոլսոյ հեռագրատանց միջեւ փոխանակուած իւրաքանչիւր հե-

ապրի համար կ'առնուի 100 փարայ , երբ 20 բառը
չ'անցնիր . քսան բառէն վեր իւրաքանչիւր տասը բառի
համար կ'առնուի 50 փարա :

Ներքին սակագին . — Մի եւ նոյն նահանգին հեռա-
գրական կայարաններուն միջեւ քաշուած հեռագրի մը
իւրաքանչիւր բառին համար պէտք է վճարել 20 փարա ,
100 փարա յաւելուածական տուրքով :

Տարրեր նահանգներու հեռագրական կայաններուն
միջեւ քաշուած հեռագրի մը իւրաքանչիւր բառին հա-
մար պէտք է վճարել 40 փարա , 5 դրուշ յաւելուածա-
կան տուրքով :

Այս սակագինը այն հեռագիրներուն համար է , որ
բոնք չեն անցնիր Իսդրըն ընկերութեան ներքին ընդ-
ծովեայ պարաններէն . գալով անոնց որոնք այդ պարան-
ներէն կ'անցնին , միեւնոյն նահանգին հեռագրական կա-
յաններու միջեւ՝ բառը 40 փարա է , 5 դրուշ յաւել-
ուածական տուրքով , եւ տարրեր նահանգներու հեռա-
գրական կայաններուն միջեւ՝ 70 փարա , $7\frac{1}{2}$ դրուշ յա-
ւելուածական տուրքով :

Եւրոպական Թուրքիայէն եւ Ասիական Թուրքիա-
յէն Արեւելեան Րուսիի քաշուած հեռագիրներուն ,
Մուսթաֆա փաշայի ուղիղ ճամբով , կը վճարուի 60 փա-
րա , առանց յաւելուածական տուրքի :

Կիպրոսի հետ փոխանակուած հեռագիրները ներքին
սակագնին ենթակայ են երբ ղրկուին Լաթաքիոյ ճամբով :

Հիճազի , Ղարպ Թարապուսի եւ Եէմէնի նահանգ-
ներուն միջեւ , եւ այդ նահանգներուն իւրաքանչիւրին ու
Թուրքիոյ միւս նահանգներուն միջեւ փոխանակուած հե-
ռագիրները ենթարկուած են միջազգային սակագնին :

Միջազգային սակագին . — Եւրոպական եւ Ասիական
Թուրքիոյ քաղաքներէն հետեւեալ տեղերը զարնուելիք
հեռագիրներէն՝ իւրաքանչիւր բառին համար կը գանձուի .

	Սովորական նամբով	Թեմնոս Շիրազի օմնգովն ավ իսկ բեթով	Օսեանի կաթնեղջի րով
	Ֆր. Սն.	Ֆր. Սն.	Ֆր. Սն.
Ալճէրիա	0 67	—	1 19
Ատէն, Եւրոպական Թուրքիայէն	4 50	4 50	5 83
» Ասիական »	4 00	4 00	5 33
Աւստրիա—Հունգարիա Ե. Թ.	0 34	0 44	0 98
» Ա. Թ.	0 46	0 46	1 00
Բորթուկալ	0 69	0 69	1 22
Գերմանիա	0 55	0 58	1 00
Եգիպ. Սատրին	Աղեքսանդրիա Ե. Թ.	1 25	1 40
	Ա. Թ.	1 00	1 90
	Միւս բաղարձները Ե. Թ.	1 25	1 65
	Ա. Թ.	1 00	2 15
Եմէն Ե. Թ.	3 75	3 75	—
» Ա. Թ.	3 50	5 00	—
Զուիցերիա	0 51	0 51	1 05
Թունուզ	0 67	0 67	1 19
Իտալիա	0 48	0 48	1 14
Հիճազ Ե. Թ.	2 75	2 75	—
» Ա. Թ.	2 50	3 25	—
Հնդկաստան Ե. Թ.	3 48	5 00	5 18
Հնդկաստան Ա. Թ.	3 23	5 50	5 68
Հոլանտա	0 60	0 60	1 05
Ղարալ Թարասպուս	0 88	0 88	1 40
Ճարոն Ե. Թ.	7 70	9 70	7 70
» Ա. Թ.	8 20	10 20	8 20
Ճիպրալթար	0 69	0 69	1 22
Մալթա	0 69	0 69	1 30
Մեծն Բրիտանիա	0 71	0 71	1 19
Յունաստան եւ Բորոս ու Եւպէե. Թ.	0 28	0 38	1 24
» » » Ա. Թ.	0 38	0 38	1 24
» միւս կղզիները	0 42	0 42	1 28
Նորվեկիա	0 72	0 72	1 08
Շուէա	0 69	0 69	1 05
Չին Ե. Թ.	5 89	7 00	7 18

ՋԱՆԱՋԱՆ ՏԷՐՈՒԹԵԱՆՑ ԴՐԱՄՆԵՐ

Հոս կը գնենք պետութեանց զանազան ոսկի եւ արծաթ դրամներուն կշիռները եւ արժէքները : Յրանսա ընդունած է տասնորդական մեզրական դրութիւնը , եւ Պեյճիգա , Զուլիցերիա , Յունաստան նոյն դրամական դրութիւնը ընդունած են 1865ի , 1878ի եւ 1885ի դրամական գաշնակցութեանց մէջ : Յունաստանի մէջ 1 տրախմիկն կը համապատասխանէ 1 ֆրանկին եւ կը ստորաբաժնուի 100 շեքսայի , ինչպէս ֆրանկը կը ստորաբաժնուի 100 սանթիմի : Սպանիա , Իտալիա , Պուլկարիա , Ռումանիա , Սերպիա նոյն դրամական դրութիւնը ի գործ կը գնեն . Սպանիոյ մէջ ֆրանքը կը կոչուի բեսսքա , Իտալիոյ մէջ շիլլա , Պուլկարիոյ մէջ շեկ (որ կ'արժէ 100 սոփիլնսիս) , Ռումանիոյ մէջ շեո (որ կ'արժէ 100 պանի) , Սերպիոյ մէջ շիկար (որ կ'արժէ 100 քարա) :

Թ Ո Ւ Ր Թ Ի Ա

ՄԵՏԱԳ	ԴՐԱՄՆԵՐ	ԿԵԻՌ	ԱՐԺԷՔ		ԱՐԺԷՔ	
		Կրամ	Ղր. .	Փր. .	Ֆրանկ	Սնդ. .
Ո սկի	Հինգ ոսկինոց	36.082	500	—	113	92
Ոսկի	Երկու քուկէս ոսկինց	18.041	250	—	56	96
Ոսկի	Մէկ ոսկինոց	7.216	100	—	22	78
Ոսկի	Կէս ոսկինոց	3.608	50	—	11	39
Ոսկի	Քառորդ ոսկինոց	1,804	25	—	5	70
Արծաթ	Մեծիտիէ	24.055	20	—	4	44
Արծաթ	Կէս մեծիտիէ	12.028	10	—	2	22
Արծաթ	Քառորդ մեծիտիէ	6.014	5	—	1	11
Արծաթ	Երկու դրուշնոց	2,405	2	—	0	44
Արծաթ	Մէկ դրուշնոց	1.203	1	—	0	22
Արծաթ	Կէս դրուշնոց	0.601	0	20	0	11

Ա. Ն. Գ. Լ. Ի. Ս.

Մեծագ.	ԳՐԱՄՆԵՐ	ԿՆԻՌ	ԱՐԺԷՔ		ԱՐԺԷՔ	
		Կամ	Շիլին	Բէն	Ֆրանկ	Սնդ.
Ոսկի	Անգլիական ոսկի	7,988	20	—	25	22
Ոսկի	Կես անգլ. ոսկի	3,994	10	—	12	61
Արծաթ	Գրաուն	28,276	5	—	5	81
Արծաթ	Կես գրաուն	14,138	2	6	2	91
Արծաթ	Շիլին	5,655	1	—	1	16
Արծաթ	Կես շիլին	2,828	—	6	0	58

Ա. Ի. Ս. Տ. Բ. Ս.

Մեծագ.	ԳՐԱՄՆԵՐ	ԿՆԻՌ	ԱՐԺԷՔ	
		Կամ	Ֆրանկ	Սնդ.
Ոսկի	4 Քրիմիցնոց	13,96	47	41
Ոսկի	1 Քրիմից (տուքաթ)	3,49	11	85
Ոսկի	8 Ֆիորին	6,452	20	—
Ոսկի	4 Ֆիորին	3,226	10	—
Ոսկի	20 Քուրոն	6,775	21	—
Ոսկի	10 Քուրոն	3,387	10	50
Արծաթ	2 Ֆիորին	24,690	4	94
Արծաթ	1 Քուրոն	5,—	0	93
Արծաթ	1 Ֆիորին (100 Քրոյն.)	12,345	2	47
Արծաթ	1/4 Ֆիորին	3,086	0	62

Գ. Ն. Բ. Մ. Ա. Ն. Ի. Ս.

Մեծագ.	ԳՐԱՄՆԵՐ	ԿՆԻՌ	ԱՐԺԷՔ		ԱՐԺԷՔ	
		Կամ	Մարկ	Ֆեն.	Ֆրանկ	Սնդ.
Ոսկի	Կրկին Քրոնեն	7,965	20	—	24	69
Ոսկի	Քրոնեն	3,982	10	—	12	35
Ոսկի	5 Մարք	1,991	5	—	6	17
Արծաթ	5 Մարք	27,777	5	—	5	56
Արծաթ	2 Մարք	11,111	2	—	2	22
Արծաթ	1 Մարք	5,555	—	100	1	11
Արծաթ	1/2 Մարք	2,777	—	50	0	56

Ռ Ո Ւ Ս Ա Ս Տ Ա Ն

ՄԵՏԱՂ	ԳՐԱՄՆԵՐ	ԿՆԻՌ	ԱՐԺԷՔ		ԱՐԺԷՔ	
		Կռամ	Բուսլի	Կուսկ.	Յրանք	Սնդ.
Ոսկի	Էմբրեոնալ	12,903	10	—	40	—
Ոսկի	Կես էմբրեոնալ	6,452	5	—	20	—
Ոսկի	Հինգ Բուսլի	—	5	—	20	—
Արծաթ	Բուսլի	—	—	100	4	—
Արծաթ	1/2 Բուսլի	10.	—	50	2	—
Արծաթ	1/4 Բուսլի	5.	—	25	1	—
Արծաթ	20 Կուսկ.	3.6	—	—	—	40

Ֆ Ր Ա Ն Ս Ա

ՄԵՏԱՂ	ԳՐԵՄՆԵՐ	ԿՆԻՌ	ԱՐԺԷՔ		ԱՐԺԷՔ Տակնորամ	
		Կռամ	Յրանք	Սնդ.	Ղրուս	Սնդ.
Ոսկի	Հարիւր Յրանքնոց	32 258	100	—	440	—
Ոսկի	Յիսուն Յրանքնոց	16,129	50	—	220	—
Ոսկի	Քսան Յրանքնոց	6 452	20	—	88	—
Ոսկի	Տասր Յրանքնոց	3,226	10	—	44	—
Ոսկի	Հինգ Յրանքնոց	1,612	5	—	22	—
Արծաթ	Հինգ Յրանքնոց	25.	5	—	22	—
Արծաթ	Երկու Յրանքնոց	10.	1	86	8	80
Արծաթ	Մէկ Յրանքնոց	5.	0	93	4	40
Արծաթ	Կես Յրանքնոց	2.5	0	46	?	20
Արծաթ	Քսան Սանդիսնոց	1.	0	19	—	88

Պ Ա Ր Ս Կ Ա Ս Տ Ա Ն

ՄԵՏԱՂ	ԳՐԱՄՆԵՐ	ԿՆԻՌ	ԱՐԺԷՔ	ԱՐԺԷՔ	
		Կռամ	Ղրան	Յրանք	Սնդ.
Ոսկի	Երկու բուման	5 7	20	17	66
Ոսկի	Մէկ բուման	2,85	10	8	83
Ոսկի	Կես բուման	1,425	5	4	42
Արծաթ	Ղրան	10.	1	0	92
Արծաթ	Բանապատ	5.20	1/2	0	46
Արծաթ	Ապատի	2.08	1/4	0	23

Հ Ն Գ Ե Ա Ս Տ Ա Ն

Մեծագ.	Գրամմներ	ԿՆԻՌ		ԱՐԺԷՔ		
		Կամ	Բուրի	Աննս.	Ֆրանկ	Սնդ.
Ոսկի	Մօնիւր	11.66	15	—	36	83
Ոսկի	$\frac{2}{3}$ Մօնիւր	7.77	10	—	24	55
Ոսկի	$\frac{1}{3}$ Մօնիւր	3.89	5	—	12	28
Արծաթ	Բուրի	11.66	—	16	2	38
Արծաթ	$\frac{1}{2}$ Բուրի	5.83	—	8	1	19
Արծաթ	$\frac{1}{4}$ Բուրի	2.91	—	4	0	59
Արծաթ	$\frac{1}{8}$ Բուրի	1.46	—	2	0	30

Չ Ի Ն Ա Ս Տ Ա Ն

Մեծագ.	Գրամմներ	ԿՆԻՌ		ԱՐԺԷՔ		
		Կամ	Ֆրանկ	Սնդ.		
Արծաթ	1 Բիասոգր	26.9	5	38		
Արծաթ	$\frac{1}{2}$ Բիասոգր	13.45	2	57		
Արծաթ	$\frac{1}{5}$ Բիասոգր	5.38	0	98		
Արծաթ	$\frac{1}{10}$ Բիասոգր	2.69	0	49		
Արծաթ	Թայիկ Հաքուան	37.5	8	26		
Արծաթ	Թայիկ Շանկայի	34.3	7	43		

Ճ Ա Ռ Ո Ն

Մեծագ.	Գրամմներ	ԿՆԻՌ		ԱՐԺԷՔ		
		Կամ	Ֆրանկ	Սնդ.		
Ոսկի	20 ԵԷՆ	33.33	103	33		
Ոսկի	10 ԵԷՆ	16.67	51	67		
Ոսկի	5 ԵԷՆ	8.33	25	83		
Ոսկի	2 ԵԷՆ	3.33	10	33		
Ոսկի	1 ԵԷՆ	1.67	5	17		
Արծաթ	1 ԵԷՆ (100 ՍԷՆ)	26.956	5	39		
Արծաթ	50 ՍԷՆ	12.5	2	22		
Արծաթ	20 ՍԷՆ	5	0	89		
Արծաթ	10 ՍԷՆ	2.5	0	44		
Արծաթ	5 ՍԷՆ	1.25	0	22		

ՄԻՍՏՆԱԼ ԿԱԶԱՆԳՆԵՐ						
ՄԵՏԱԳ.	ԴՐԱՄՆԵՐ	ԿՇԻՌ	ԱՐԺԷՔ		ԱՐԺԷՔ	
		Կում	Տոլար	Սենդ	Յրանք	Սնդ.
Ոսկի	Կրկին արծուեղրամ	33,436	20	—	103	65
Ոսկի	Արծուեղրամ	16,718	10	—	51	83
Ոսկի	Կէս արծուեղրամ	8,359	5	—	25	91
Ոսկի	Երեք տուլարնոց	5,15	3	—	15	55
Ոսկի	Քոբրդ արծուեղրամ.	4,179	2 ¹ / ₂	—	12	95
Ոսկի	Տուլար	1,672	—	—	5	18
Արծար	Տուլար	26,729	—	100	5	34
Արծար	Կէս տուլար	12,5	—	50	2	50
Արծար	Քառորդ տուլար	6,25	—	25	1	25
Արծար	Քսան սենք	5.	—	20	1	—
Արծար	Տայմ	2.5	—	10	0	50

ԶԱՆԱԶԱՆ ՏԷՐՈՒԹԵԱՆՑ

Զ Ա Փ Ե Ր Ո Ւ Կ Շ Ի Ռ Ն Ե Ր

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

ԿՇԻՌՆԵՐ. — 1 քանքար = 44 օխս (քիլո 56,45): — Պարման = 6 օխս (քիլո 7,692): — 1 օխս = 400 տիրէմ (քիլո 1,282): — 1 տիրէմ = 4 տէնկ (կրամ 3,205): — 1 տէնկ = 4 քրամ կամ կուտ: — 1 քրամ = 4 ցորեն: — Փայտի և քարի համար կը գործածուի ջէքիւն = 176 օխս (քիլո 225,80). սակայն հիմայ գործածուած չէքիւն 250 քիլո է: 1871էն ի վեր Թուրքիա ընդունած էր մէղրական դրամիւնը, սակայն 1898էն ի վեր սովորական առևտուրնեբրու մէջ հին օխսն կը գործածուի:

ԵՐԿԱՅՆՈՒԹԵԱՆ ԶԱՓԵՐ. — 1 մէքլար կամ ճարտարապետական արշըն = 24 մատ (սանդիմէդր 75,8): — 1 մատ = 12 զիմ (ս. 3,16): — 1 զիմ = 12 կէտ: — 1 չուխաճը կամ կերպասի արշըն = 8 բուպ, 16 կիրան (ս. 68,6): — 1 կնտազէ = 8 բուպ, 16 կիրան (ս. 65,2):

ՄԱԿԵՐԵԻՈՅՅԻ ԶԱՓԵՐ. — Քառակուսի զիրա = 576 քառակուսի մատ (քառակուսի մէդր 0,574): — Քառակուսի արշըն = 64 քառակուսի բուպ (քառակուսի մէդր 0,462): — Քառակուսի կնտազէ = 64 քառա-

կուսի բույ (քառակուսի մէջր 3,423)։ — Տեօնիւմ (արտաւար) = 1600 քառակուսի արշըն (քառակուսի մէջր 918)։

ՏԱՐՈՂՈՒԹԵԱՆ ԶԱՓԵՐ. — Արմտիբի համար կը զործածուի քիւէն = 6 խուծի (1 լիղր 33,158)։ — Մէկ խորանարդ զիրա = 13,824 մատ (խորանարդ մէջր 0,435)։ — Կամի համար կը զործածուին օխանոց, կէս օխանոց, հարկւր տրամնոց, յխուեն տրամնոց ամաններ իբր չափ։

Ֆ Ր Ա Ն Ս Ա

ԿԵՒՈՒՆԵՐ. — 1 բօնօ (ծովային բառ) = 1000 բիւօ — Քւերալ = 100 բիւօ — Քիւօկրամ = 1000 կրամ — Էքքօկրամ = 100 կրամ — Տեքալկրամ = 10 կրամ — Կրամ = 1 խորանարդ մէջր չուր՝ պարապին մէջ կը ռուսաւ։ — Տեօնկրամ = 0,1 կրամ — Սանդիկրամ = 0,01 կրամ — Միլիկրամ = 0,001 կրամ։

ԵՐԿԱՅՆՈՒԹԵԱՆ ԶԱՓԵՐ. — Միլիամկեր = 10,000 մէջր։ — Քիւլմիկեր = 1000 մէջր։ — Էքրօմկեր = 100 մէջր։ — Տեքամկեր = 10 մէջր։ — Մեկեր = Երկրիս միջօրէականին $\frac{1}{40,000,000}$ մատը։ — Տեօնմկեր = 0,1 մէջր։ — Սանդիմկեր = 0,01 մէջր։ — Միլիմկեր = 0,001 մէջր։

ՄԱԿԵՐԵՒՈՅԹԻ ԶԱՓԵՐ. — Էքրօռ = 10,000 քառակուսի մէջր։ — Առ = 100 քառակուսի մէջր։ — Սանդիառ = 1 քառակուսի մէջր։

ՀԱՍՏԱՏՈՒՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒ ԶԱՓԵՐ. — Տեքապէռ = 10 մէջր խորանարդ։ — Սպէռ = 1 մէջր խորանարդ։ — Տեօնպէռ = 0,10 խորանարդ մէջր։

ՏԱՐՈՂՈՒԹԵԱՆ ԶԱՓԵՐ. — Քիւօլիղր = 1000 լիղր։ — Էքքօլիղր = 100 լիղր։ — Տեքալիղր = 10 լիղր։ — Լիղր = 1։ — Տեօնլիղր = 0,1 լիղր։ — Սանդլիղր = 0,01 լիղր։ — Միլիլիղր = 0,001 լիղր։

ԱՆԳԼԻԱ ԵՒ ՄԻԱՅԵԱԼ-ՆԱՀԱՆԳՆԵՐ

ԿԵՒՈՒՆԵՐ. — Թօնօ (տակառչափ) = 20 կենդինար (1016 բիւօ, 048 կրամ)։ — Կենդինար = 112 լիպրա (50 բիւօ, 802 կրամ)։ — Գօսորղրը = 28 լիպրա (12 բիւօ, 700 կրամ)։ — Լիպրա = 16 աւուն (453 կրամ 593) որ սովորական ապրանքներ կը ծառայէ։ — Կայնաե Թրոյ լիպրան, որ կը ծառայէ ծանրաղին նիւթեր և զեղ կը ծառայէ և հաւասար է 373 կրամ 242ի։ — Աունս = $\frac{1}{12}$ Թրոյ լիպրայի (31 կրամ 103)։ — Բէնիուայը = 1 կրամ 55։

ԵՐԿԱՅՆՈՒԹԵԱՆ ԶԱՓԵՐ. — Մայլ կամ մղոն = 1760 եարտա (1609 մէջր 315)։ — Ֆերլոն = 220 եարտա (201 մէջր 164)։ — Բօլ կամ բրրբ = $5\frac{1}{2}$ եարտա (5 մէջր 029)։ — Ֆեքմըմ = 2 եարտա (1 մէջր 829)։ —

Եարտա = 3 ոտք (0 մէղր 914): — Ոտք = $\frac{1}{3}$ եարտա (0 մէղր 305): —
Ինչէզ = $\frac{1}{36}$ եարտա (0 մէղր 025):

ՄԱԿԵՐԵՒՈՅՅԻ ԶԱՓԵՐ. — Էզր = 4840 բառակուսի եարտա (4046
բառակուսի մէղր 71): — Բուտ = 4210 բառակուսի եարտա 1011 բառա-
կուսի մէղր 6775): — Բուտ = 30 $\frac{1}{4}$ բառակուսի եարտա (25 մէղր 239):
— Եարտա = 9 բառակուսի ոտք (0 բառակուսի մէղր 8361): — Քառա-
կուսի ոտք = 0 բառակուսի մէղր 0929:

ՀԱՍՏՄՏՈՒՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒ ԶԱՓԵՐ. — Խորանարդ ֆիղհրմ = 6
խորանարդ մէղր 116: — Ծովային տակառաջափ = 1 խորանարդ մէղր
132: — Խորանարդ ոտք = 28 բառակուսի տէսիմէղր 315:

ՏԱՐՈՂՈՒԹԵԱՆ ԶԱՓԵՐ. — Հեղուկի համար. Թօնօ = 252 կալոն
(1149 լիղր): — Քուորդր = 64 կալոն (290 լիղր 7): — Տակառ = 36
կալոն (163 լիղր): — Արմտիքի համար. Պըշրլ, 8 կալոն (36 լիղր 36): —
Սէք, 24 կալոն (109 լիղր): — Քուորդր = 64 կալոն (290 լիղր 7): — Հե-
ղուկի համար. Կայս, կալոն = 4 բուորդըր (4 լիղր 543): — Քուորդըր =
 $\frac{1}{4}$ կալոն (1 լիղր 136): — Բայնք = $\frac{1}{8}$ կալոն (0 լիղր 568): — Կիլ =
 $\frac{1}{32}$ կալոն (0 լիղր 142):

Ռ Ո Ւ Ս Ի Ա

ԿՇԻՌՆԵՐ. — Լիպրա = 96 սալօմնիք (409 կրամ 512): — Լօղ =
3 սալօմնիք (12 կրամ 7968): — Սալօքնիք = 96 սալիա (4 կրամ 266): —
Տօլիա = 0 կրամ 044: — Պերքովից = 400 լիպրա (163 թիւօ 805): —
Բուտ = 40 լիպրա (16 թիւօ 380):

ԵՐԿԱՅՆՈՒԹԵԱՆ ԶԱՓԵՐ. — Վէրսոլ = 500 սաժէն (1066 մէղր 78):
— Սաժէն = արշին (2 մէղր 134): — Արշին = $\frac{1}{3}$ սաժէն (0 մէղր 711):
Վերսօք = $\frac{1}{48}$ սաժէն (0 մէղր 044): — Ոտք, 0 մէղր 305:

ՄԱԿԵՐԵՒՈՅՅԻ ԶԱՓԵՐ. — Տեսիաղին = 2400 բառակուսի սաժէն
(109 ար 25):

ՀԱՍՏՄՏՈՒՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒ ԶԱՓԵՐ. — Խորանարդ սաժէն = 9
խորանարդ մէղր 712: — Խորանարդ արշին = 0 խորանարդ մէղր 360:

ՏԱՐՈՂՈՒԹԵԱՆ ԶԱՓԵՐ. — Հեղուկինք. Պօշքա = 4 վէտրօ (491
լիղր 947): — Վէտրօ = 10 բրուշքա (12 լիղր 299): — Շրօֆ = $\frac{1}{8}$
վէտրօ (1 լիղր 537): — Քուուշքա = $\frac{1}{10}$ վէտրօ (1 լիղր 230): — Չարքա
= $\frac{1}{100}$ վէտրօ (0 լիղր 123): Արմտիք. Ձերվերդ = 8 չէժվերիք (209 լիղր
902): — Օսմին = 4 չէժվերիք (104 լիղր 950): — Ձերվերիք = 26 լիղր
237: — Կարնիդ = $\frac{1}{8}$ չէժվերիք (3 լիղր 280):

Պ Ա Ր Ս Կ Ա Ս Տ Ա Ն

ԳՇԻՌՆԵՐ. — Գարեկծի պարման = 2 բիւ 790: — Թագաւորական պարման = 5 բիւ 580: — Մրակալ = 4 կրամ 64:

ԵՐԿԱՅՆՈՒԹԵԱՆ ԶԱՓԵՐ. — Զեր = 1 մէղր 20: — Թեհրանի զեր = 1 մէղր 12: — Գարեկծի զեր = 1 մէղր 04:

ՄԱԿԵՐԵՒՈՅԹԻ ԶԱՓԵՐ. — Զերի էրաք (գորգեր չափելու համար) = 0 մէղր 99: — Փարսախ = 6 բիլոմէղր:

ՏԱՐՈՂՈՒԹԵԱՆ ԶԱՓԵՐ. — Հեղուկները կշիռով կը ծախուին: — Արմտիր. — Արբապա = 66 լիլր: — Շենիքա = 1 լիլր 32:

Զ Ա Ն Ա Զ Ա Ն Պ Ե Տ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Գերմանիա, Աւստրիա-Հունգարիա, Պելճիզա, Տաւրուսքա, Սպանիա, Ֆինլանսա, Յունաստան, Իտալիա, Հոլանսա, Բորբուկալ, Ռումանիա, Սերպիա, Շուէս-Նորվեկիա, Հուիցերիա, Պրեզիլ, Մեքսիկա, Շիլի եւ Կեղրոնական Ամերիկայի ու Հարաւային Ամերիկայի Հանրապետքանց մեծագոյն մասը մէղրական դրուժիւնը կը գործածեն:

Ծ Ո Վ Ա Յ Ի Ն Զ Ա Փ Ե Ր

Ծովային կամ աշխարհագրական փարսախ = 5556 մէղր: — Ծովային մղոն ($\frac{1}{60}$ աստիճան) = 1152 մէղր: — Անքապլիւռ = 200 մէղր: — Նեօ = 15 մէղր 432: — Գրկաչափ = 1 մէղր 624: — Ծովային քառակուսի փարսախ = 30 քառակուսի բիլոմէղր, 87: — Ծովային քառակուսի մղոն = 3 քառակուսի բիլոմէղր, 43:

1900ի Ընդարձակ Օրացոյցին Գործի մարդոց բաժնին մէջ օրինական անգեկելութիւններ արուած են նաեւ Երկրագործական դրամասան, Տոկոսի օրեկնիքն եւ Վազֆ կաշուածներու ու Արագիի կմիրիկներու ժառանգական փոխանցման վրայ:

ԸՆՏԱՆԻՔԻՆ ՀԱՄԱՐ (*)

ՍԵՐ ՊԻՒՏՃԷՆ

Տարին անգամ մը, զեկտեմբերին, ամէն մարդ իր շահած գրամին համեմատութեամբ պէտք է ճշդէ իր անձնական կամ ընտանեկան պիւտճէն: Այս պիւտճէին պատրաստութեան ատեն՝ պէտք չէ հաւանականութեանց վրայ հաշուի. հասոյթի կողմը պէտք է նշանակել այն գումարները միայն, զորս գանձելուն մարդ ապահով է. յոյսերով բաւականանալու չէ: Անգամ մը որ տարեկան հասոյթը ճշդուի, պէտք է ճշդել ծախքերուն մէջ ինչ գումար որ կարելի է յատկացնել վարձքի, սնունդի, հագուստի, եւ այլն: Ծախքը հասոյթին համաձայնեցնելը մեծագոյն խոհեմութիւնն է. եթէ ծախքերը հասոյթէն աւելի լլան, գծրախտութիւնն է որ կը մանէ տանը գունէն, որովհետեւ պարսֆեր ընելու կը ստիպուի մարդ, եւ պարսֆերը կը դառնացնեն կեանքը: Ծախսելու փորձութեանց դէմ զնելու համար լաւ է միշտ աչքի առջեւ ունենալ պիւտճէն: Հարկ է զգուշանալ պղտիկ ծախքերէն ալ, որովհետեւ անոնք իրարու վրայ բարդուելով ամսուան վերջը կարեւոր գումար մը կը կազմեն: Որքան

(*) 1900ի Ընդարձակ Օրացոյցին Ընտանիքին համար բաժնին մէջ խօսուած է Նորածիններու առողջապահութեան վրայ, եւ Մեր խոհանոցը վերնագրին տակ, տեղեկութիւններ տրուած են սովորական կերակուրներու պատրաստութեան եղանակին վրայ:

ալ համեատ ըլլայ շահուած գումարը , կարելի է գտնէ 100ին 10ը խնայել , եթէ մեր ծախքերը կարգի գնենք եւ կէտ առ կէտ հետեւինք մեր պիւտճէին :

Ամէն մարդ պէտք է կանոնաւորապէս իր հասոյթնորուն եւ ծախքերուն հաշիւը բռնէ : Խելացութիւն է մուտքի եւ ելքի կշիռը ճշգիւ գտնէ տասը օրը անգամ մը , ամսուան 10ին , 20ին եւ 30ին : Ամէն ամսուան վերջը քննելու է թէ եզամ ծախքը կը համապատասխանէ՞ ճշգուած պիւտճէին : Այս կերպով հնար է աւելորդ ծախքերը պակսեցնել հետզհետէ եւ օր մը բոլորովին զեղչել զանոնք :

ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆԸ

Խորհուրդներ ամուսնութեան համար. — Ամուսնութեան վրայ գրող հեղինակները շատ մը խորհուրդներ տուած են այս մասին : Անոնցմէ մէկ քանին կը համառօտենք հոս .

1. Պէտք է որ ամուսինները պատկանին միեւնոյն ընկերական միջավայրին : Տարբեր միջավայրերու պատկանողները յաճախ առօրեայ բաներու մէջ տեսակ տեսակ յուսախարութեանց կը հանդպին :

2. Պէտք է որ ամուսինները միեւնոյն կրօնքը ունենան . հակառակ պարագային կրնայ ընտանիքին մէջ անհամաձայնութիւն ծագիլ զաւակներու մասին : Յայտնի է թէ Հայ. Եկեղեցին ամուսնութիւնը կ'օրհնէ այն ատեն միայն երբ այր ու կին Հայ. Եկեղեցւոյ զաւակ են :

3. Պէտք է որ այրը իր կնոջմէն 5 կամ 6 տարի աւելի տարիքոտ ըլլայ :

4. Պէտք է որ այր ու կնոջ հարստութիւնները համեմատական ըլլան : Տարակոյս չկայ որ խելացի եւ հրապուրիչ ըլլալը , սաղանդներ ունենալը յաճախ աղջկան մը համար օժիտին տեղը կը բռնէ , սակայն աղքատ երիտասարդի մը համար նոյնը չէ :

4. Պոլսոյ հայ ամուսնութիւնները. — Հայ ամուսնութիւնները, վերջին յիսուն տարիներուն, զարգացած կեդրոններու մէջ, հետզհետէ քիչցած են : Այս երեւոյթը շատ ուշադրաւ է : Մասնաւորապէս 4. Պոլսոյ վրայ խօսելով , տարակոյս չկայ որ ասկէ յիսուն տարի առաջուան բնակիչներուն թիւը նկատողութեան աննելով, համեմատաբար, շատ աւելի ամուսնութիւն տեղի կ'ունենար : Ըստ Պատրիարքարանի փոխանորդարանին արձանագրութեանց , վերջին երեք տարիներուն ամուսնութիւնները հետզհետէ շատցած են սակայն . այսպէս, 1897ին 349, 1898ին 396 եւ 1899ին 415 ամուսնութիւն արձանագրուած են : 1899ի 415 ամուսնացածներէն 112ը ձրի , մնացած 280ը Ե. աստիճանէ վար «խաչ» ընտրած են , եւ հազիւ 10ի չափ ամուսնութիւններ արձանագրուած են Ե. աստիճանէ վեր «խաչ»ով : Այս 415 ամուսնութիւններէն տեղի ունեցած են 75ը Բերայի , 71ը Գում գափուի , 47ը Կէտիկ բաշայի , 46ը Սամաթիոյ , 29ը Սկիւտարի , 23ը Փատը գիւղի մէջ , եւայլն :

Պատրիարքարան եւ ամուսնութեան ծախքեր. — Նըշանատութեան համար փեսացուն կողմէ կը վճարուի Պատրիարքարանի հսցագին, իւղագին եւ կոնդակագին . իսկ հարսնացուն կողմէ հսցագին եւ կոնդակագին : Երկու կողմերը կը վճարեն հաւասար գումարներ նշանատութեան , ինչպէս հրամանագրի համար : Ահա այս վճարմանց զանազան աստիճաններուն ցուցակը .

	Փետացութեան կողմէ		Հարսնցութեան կողմէ, Հացագին	Երկու կողմէ, Կոնդակագին	Փետացութեան կողմէ, Հրամանագին	Հարսնցութեան կողմէ, Հրամանագին
	Խաչագին	Հացագին				
Ա. Աստիճան	Ըստ հաճոյից	Ըստ հաճոյից	Ըստ հաճոյից	Ըստ հաճոյից	Ըստ հաճոյից	Ըստ հաճոյից
Բ. »	1000	500	1500	20	500	500
Գ. »	600	300	900	20	300	300
Դ. »	400	200	600	10	200	200
Ն. »	300	150	450	10	150	150
Զ. »	200	100	300	10	100	100
Է. »	150	75	225	10	75	75
Ը. »	100	50	150	5	50	50
Թ. »	80	40	120	5	40	40
Պ. »	50	25	75	5	25	25
Պ.Ա. »	Ձրի	Ձրի	Ձրի	Ձրի	Ձրի	Ձրի

Երբ պատահի որ նշանառութենէ ետքը մէկ կամ միւս կողմէն ս եւ է պատճառաւ մը նշանը ետ ընել հարկ ըլլայ, ըստ որոշման Ազգ. Վարչութեան, նշանառութեան օրը երկուստեք վճարուած դումարին չափ պիտի վճարուի իբր ստացանք Ազգ. Կեդրոնական Մատուկին :

Ձրի կը կատարուին նշանառութիւնները միայն ա՛յն աղջկանց, որոնց չքաւորութիւնը վկայուած եւ հաստատուած է թաղին եկեղեցւոյն Թաղ. Խորհուրդէն :

Պատրիարքարանը Պոլսէն դուրս գանուող աղգային ներու ամուրիութեան վկայագիրներէն եւ Պոլսէն դուրս գանուող Պոլսեցիներու ամուսնութեան հրամանագիրներէն կը գանձէ, իրենց կարողութեան համեմատութեամբ, 150, 100 կամ 50 դրուշ. նոյնպէս Կ. Պոլսոյ մէջ

տեղի ունեցած ամուսնութեանց անուսնական վիայա-
զիւններուն համար, նշանախօսութեան սատիճանին հա-
մեմատութեամբ, 25 կամ 50 դրուշ :

Հարսնիքի օրեր. Եկեղեցական կանոնները կ'ար-
գիկեն հարսնիք ընել բոլոր տարւոյն մէջ հանդիպող տէ-
րունի օրերուն եւ պահքի օրերուն, սրով հարսնիք կա-
տարելու համար կը մնան բոլոր սուրբերու տօները, ու-
րոնք պահքի չեն զուգադիպիր : Այսպէս, բոլոր Մեծ
Պահքի միջոցին հարսնիք չ'ըլլար պահքի պատճառաւ .
Ջատիէն մինչեւ Հոգեգալստեան ութօրէքը հարսնիք
չ'ըլլար տէրունի տօներուն պատճառաւ : Օրացոյցին մէջ
Կիրակիի մը առջեւ գրուած « հարսնիք » բառը կը նշա-
նակէ թէ նոյն շաբթուն հանդիպող Երկուշաբթի, Երեք-
շաբթի, Հինգշաբթի եւ Շաբաթ օրերը հարսնիք տեղի
կրնայ ունենալ, բայց ո՛չ Կիրակին, որ տէրունի է, ոչ
ալ Ուրբաթ եւ Չորեքշաբթի, պահքի պատճառաւ :
Աստուածածնայ տօնին իններորդ օրը, թէեւ Երկուշաբ-
թի, հարսնիք չ'ըլլար : Բայց յաջորդ Երեքշաբթին կրնայ
ըլլալ :

ՇՆՋԱՆԵՂՁՈՒԹԵԱՆ ԴԷՍ ԴԱՐՄԱՆ

Շնչահեղձութիւնը յառաջ կրնայ գալ բազմաթիւ
պատճառներէ, ինչպէս երբ մարդ ծովին տակ երկար
ատեն մնայ շունչէ զուրկ, կամ փակ սենեակի մը մէջ
կիսավառ ածուխէ արտադրուած ածխային թթուն չնչէ,
եւայլն : Շնչահեղձութեան դէմ գլխաւոր դարմանն է
արուեստական շնչառութիւնը, զոր քանի մը ժամ յա-
րասեւ կերպով ի գործ դնելու է . եթէ այդ միջոցին կա-

բելի չըլլայ արդիւնքի մը հասնիլ , այն ատեն միայն ներքելի է գաղբեցնել գործողութիւնը :

Պէտք է շնչահեղձը տանիլ օդաւէտ տեղ մը , որ շատ տաք չըլլայ . պէտք է հանուեցնել եւ պառկեցնել զայն , մարմնոյն վերի մասը քիչ մը բարձր . կզակը բանալ , գզալի մը կամ փայտի կտորի մը միջոցաւ բաց բռնել զայն , լեզուն դուրս քաշել եւ օգնականի մը բռնել տալ :



Պատկեր 19

տէն՝ բխամտաբ դէպ ի առաջ , ճնշել երկու կողմէն կուրծքին վրայ անոր բազուկներուն միջոցաւ (Պատկեր 19),



Պատկեր 20

սեղմել , բերել դէպ ի գլուխը , եւ այսպէս շարունակել 16էն 18 անգամ տեղի պիտի ունենայ այս շարժումը : Մի եւ նոյն ժամանակ , լեզուն բռնող օգնականը կրնայ լեզուն դուրս քաշել արագ արագ , ջանալով որ այդ շարժումները , համապատասխանեն թեւերու շարժմանց : Այն ատեն կը սկսի լսուիլ թոքե-

երբ օգնականները մարմինը կը շփեն ալքոլով կամ չոր ֆանեղայով , պէտքէ կենալ շնչահեղձին գլխուն կողմը , բռնել թեւերը արմուկին մօտ .

ապա թեւերը գլխուն վրայ բերել աղեղնածեւ շրջան մը դժել տալով անոնց (Պատկեր 20) . եւ յետոյ վերստին կուրծքին վրայ տանիլ անոր թեւերը ,

բուն մէջ մանուղ օգին սուլումը եւ շնչառութիւնը հետզհետէ կը հաստատուի, եթէ ժամանակին ձեռնարկուի այս գործողութեան պէտք եղած զգուշութիւններով :

Դ Ե Ղ Թ Ա Փ Ն Ե Ր

Եթէ կասկածուի թէ մէկը թունաւորուած է, այն պարագային ուր ծանօթ չըլլայ թունաւորման պատճառ եղող թոյնին տեսակը, հարկւր յիսուն տրամ ջուրի մէջ անուշի դգալ մը մանանեխի (հարճալ) փոշի գնել եւ խմցնել հիւանդին : Փսխումները փութացնելու համար, կարելի է տալ միանգամայն տաք կաթ կամ ջուր, որուն խառնելու է ձէթ կամ հալած կարագ :

Եթէ թոյնը ծանօթ է, կարելի է, հետեւեալ քանի մը պարագաներուն մէջ, նշանակուած միջոցներուն գիւմել : — Եթէ թունաւորումը զսոխիով (սրչան օքոռ, arsenic) տեղի ունեցած է, կարելի եղածին չափ շուտ փսխել տալու է մանանեխ եւ աղ խմցնել տալով, խրաքանչիւրէն մէյ մէկ դգալ. անմիջապէս ետքը տալու է ձէթ, հալած կարագ, կաթ : — Եթէ սրջասպով (զան, vitriole) թունաւորուի մարդ, խմցնել ջուրի մէջ հալեցուցուած ձերմակ մակնեկիս : — Եթէ պղինձի ժանգն է թունաւորման պատճառ, պէտք է անմիջապէս բսխել տալ մանանեխով, գարբի գաղջ ջուր խմցնել եւ հիւանդին փորին վրայ տաք աքերաներ (շալիս) գնել : — Մորժիկնով եւ ալիոնով թունաւորման պարագային՝ պէտք է տալ բսխեցուցիչներ, եւ գիմել հետեւեալ դրրդիչ միջոցներուն՝ պաղ աուշեր, խահուէով գրեխում, ձաղկում, արուեստական շնչառութիւն, եւ այլն : — Եթէ թունաւորումը տեղի ունեցած է քունառոր սունկերու

միջոցաւ, պէտք է տալ բոխեցուցիչ զեղեր, 25 կրամ հիկնոյ եսաղի, տաքցնել սաքերն ու ձեռքերը. եւ գիմել գրդիչ միջոցներու :

Ա Ն Ո Ւ Շ Ն Ե Ր

Մասնուսուր գիտելիք. — Անուշներու համար պէտք է խոշոր կտոր շաքար գործածել :

Մէկ օխտ շաքարի համար կէս օխտ ջուր եւ մէկ ապուրի զգալ լեցուն լեմոնի ջուր գնելու է :

Կրակը պէտք է զօրաւոր ըլլայ :

Կիսրոնի սաւուրի անուշ (աղաճ գալուսը *rhenisk*).— Կիսրոնին վրայի մաշկը բարակ բարակ սակելէ ետքը տաշել (*rhenisk*), լաթի մը մէջ եփ ջուրը նետել, երկու երեք եփ գալէ ետքը հանել սաղ ջուրը նետել եւ ջուրը նետող հետէ փոխել մինչեւ որ կիսրոնը պաղի. յետոյ թուղու որ չորնայ՝ վրան լիմոն ջուր սրսկելով : 500 արամ շաքարը կտրել եւ խըլվամի չեկած 100 արամ տաշուք մէջը նետել ու եփել մինչեւ որ թանձրանայ : Յետոյ անուշի ամաններուն տակը պեղրամոյի տաշուք լեցնել ու վրան սլ անուշը պարպել : Երբ անուշը զգալով պնակին մէջ կաթեցուցած ասնու կաթիլ կաթիլ կենայ, պէտք եղած խըլվամի ասափճանին հասած է : Յետոյ անուշը ամաններու մէջ լեցնելու է, որոնց բերանը գոցելու չէ մինչեւ որ պաղի :

Կիսրոնը կտր կտր եփուած անուշ. — Կիսրոնը բարակ բարակ սակելէ յետոյ փոքրիկ քառակուսի կտորներու բաժնելու է առանց մէջի թթուն անելու, եւ քիչ մը ջուրի մէջ խաշելէ ետքը, ճիշդ տաշուքին պէս չորցընելու է, եւ միեւնոյն կերպով եփելու է : Միայն թէ՛ վար ամուսած միջոցին լեմոն գնելու է որպէս զի անուշին գոյնը ձերմակ ըլլայ :

Ելակի անուս . — Պէտք է նախ շաքարը խըղամի
բերել լեմոն քամելով : Երբ շաքարի կաթիլը անշարժ
կենայ պնակին մէջ , մաքրուած ու լուացուած ելակ-
ները պէտք է մէջը նետել , եւ երկու երեք եփ ելլելէն
ետքը՝ վար աննել , շերեփով (ֆրժէկ) ելակները զգու-
շութեամբ հանել , չոր պնակի մը մէջ դնել , եւ շաքարը
պարզուած անցընելով նորէն կրակին վրայ դնել որ եփ
ելլէ ու ասջի խըղամի՛ն գայ : Այն ատեն ելակները մէջը
նետելու է , շարունակ տակի կողմէն խառնելով որպէս
զի չայրին : Փափաքուած խըղամի համնելէ ետքը նորէն
լեմոն մը կը քամուի եւ վար կ'անուսի : Մէկ օխա շա-
քարին , 300 արամ ելակ պէտք է դնել , եւ մէկ օխա-
յէն աւելի չեփել մէկ անգամին :

Նարիկի անուս . — Միւսնոյն կերպով կ'եփուի նա-
րինջը , մէկ օխային համար 3 խոշոր նարինջ դնելով ,
զորս պէտք է կանխաւ սակել , խաշել ու փոքրիկ կտոր-
ներու բաժնել կլտրոնին պէս :

Յունացի անուս . — Այսպէս կ'եփուի յունացը , զոր
պէտք է կանխաւ խաշել , վրայի մորթը եւ կուտերը
հանել : Ծաքարին գոյնը ճերմակ բլլալու համար , կա-
րելի է անուշը եփելէ յետոյ յունացիները շաքարին
մէջէն հանել , եւ ուրիշ խըղամի եկած շաքարի մէջ
նետել , մէկ եփ մը հանել ու վար աննել :

Բալի անուս (ֆրժէկ) . — Այսպէս կ'եփուի նաեւ բա-
լին անուշը , զոր սակայն պէտք է փոշի շաքարով եփել ,
սանին մէջ կարգ մը շաքար եւ կարգ մը բալ դնելով ,
մէկ օխային մէկ օխա :

Վարդի անուս . — Իսկ վարդին անուշը կ'եփուի , վար-
դին մաքուր թերթերը աղէկ մը փետակելով , եւ կարգ մը
փոշի շաքար եւ կարգ մը վարդ շարելով սանին մէջ . 500
արամ շաքարի համար՝ 100 արամ վարդի թերթ պէտք
է գործածել : Յետոյ թերթերուն շատ կարմիրները ու

աւրուածները խաշելով ու մէջը լիմնն մը քամելով պէտք է ջուրը պարզուատէ մը անցընել եւ վարդին մէջ լեցնել , ու անով եփել : Վարդին խըվաւը թանձր ըլլալու չէ :

Սերկելիի շոդապ . — Հինգ օխա սերկելիլ պէտք է սակել , կտոր կտոր ընել , եւ մինչեւ բերանը ջուր լեցընելով սանի մը մէջ խաշել , յետոյ պարզուատէ անցընելով ջուրը սաննել , երկու չափ ջուր , մէկ չափ փոշի շաքար լեցնել , ստանց լիմննի խըվաւի բերել . խըվաւը հասկնալու համար , պէտք է զգալ մը անուշէն լեցնել պնակին մէջ , յետոյ զգալով մը բաժնել զայն . եթէ երկու մասերը իրարու չմիանան , խըվաւը հասած է : Պէտք չէ մոռնալ թէ շերեփ գործածելու չէ այս անուշը եփուած ատեն :

Սալորի եւ ծիրանի շոդապ . — Միեւնոյն կերպով կ'եփուին սալորի եւ ծիրանի շոդապները , սակայն մէկ օխա շաքարին մէկ օխա ծիրան կամ սալոր գնելով :

Սերկելիի փեսիլ . — Սերկելիլը խաշել , քամել , մէջը քիչ մը իր ջուրէն գնելով ճմլել , խոշոր մաղէ մը անցընել : Մէկ օխա սերկելիլին մէկ օխա շաքարի փոշի , եթէ կ'ուզես որ թանձր ըլլայ մէկ ու կէս օխա շաքար գնել , քիչ կրակի վրայ փայտէ զգալով մը խառնելով խառնելով եփել որպէս զի տակը չառնէ : Աղէկ մը թանձրանալէն ետքը , պէտք է երկու մաս հաստութեամբ արտէին մէջ լեցնել , արեւուն դիմացը չորցնել , կտոր կտոր ընել , ամաններու մէջ լեցնել , բերանը գոցել : Կարելի է ասոր մէջ աւելցնել նաեւ ստիլուած նուշ եւ քիչ մըն ալ կասի (քարչին) , վար առնելու մօտ :

Ծիրանի փեսիլ . — Ծիշդ այսպէս կ'ըլլայ նաեւ ծիրանի փեսիլը :

Ելակի չեվիւրմե . — Ելակի չեվիւրմե եփելու համար մէկ օխա շաքարին 60 տրամ ելակի ջուր պէտք է գնել :

Նախ շաքարը խըղվաճի բերել առանց լեմոնի, յետոյ
եղակին ջուրը մէջը լեցնել, եւ դարձեալ խըղվաճի բե-
րել, վար առնել, եւ հազիւ հինգ վայրկեան անցընելէ
ետքը, տաք տաք դարձնել :

Ուրիշ չեղիրմեքներ . — Այսպէս կ'եփի բալը, ծի-
րանը, նարինջը . այս վերջինին փոխանակ ջուրը առնե-
լու, կեղեւը պէտք է տաշել, ու բարակ լաթի մը մէջ
սեղմելով հըթը քամել ու դնել :

Այսպէս կ'եփուի պեղրամոդի եւ պիստակի չեղիր-
մեքն, միայն թէ պէտք է կանխաւ պեղրամոդը բարակ
մը տաշել, իսկ պիստակը բարակ մը ձեծել եւ շաքարը
դարձուած միջոցին, երբ սկսի ճերմըկիլ, մէջը նետել :
Օխային 100 տրամ : Պէտք է գիտնալ թէ առանց պտուղի
ջուր դնելու եփուած չեղիրմեքներուն՝ հարկ է 3 ար-
ծաթ դգալ լեմոնի ջուր դնել, եւ ասոնք պաղե-
ցընելէ ետքը դարձնել :

Միեւնոյն կերպով կ'եփուին նուշին, մանիշակին,
յամպարին (արևպեր), վանիդիային, շոֆուային չեղիրմե-
քները :

ՕՇԱՐԱԿՆԵՐ

Լեմոն . — Շաքարը խըղվաճի բերել, քանի մը լեմոնի
վրան տաշել եւ բարակ լաթէ մը քամելով հըթը առ-
նել, յետոյ 120 տրամ լեմոնի ջուր քամել, ու շաքարին
մէջ լեցնելով առանց եփի բերելու վար առնել : Մէկ
օրս շաքար 120 տրամ լեմոնի ջուրի :

Նարինջ . — Միեւնոյն կերպով եփել . 1 օրս շա-
քարին 12 նարինջի եւ 5 լեմոնի ջուր դնելով :

Ելակ . — Շաքարը խրվամբի բերել , ելակները մէջը նետել , երկու եփ բերել , վար առնել եւ պարզուտէ անցընել : 1 օխա շաքարին 1 օխա ելակ :

Բալ . — Միեւնոյնը :

Հաղարջ (ֆրեկնկ իզիւմի) . — Միեւնոյնը . 1 օխային 100 տրամ :

Արեայամոր (զմալուչա) . — Միեւնոյնը :

Միրան (ֆայրը) . — Միեւնոյնը . 1 օխա շաքարին 1 օխա ծիրան :

Հոյն (ֆրզըլճըֆ) . — Միեւնոյնը . 1 օխա շաքարին 300 տրամ հոյն :

ԸՄՊԵԼԻՆԵՐ

Քիւռասո . — Շիշի մը մէջ պէտք է լեցնել 200 տրամ թուրինջի վրայի կեղեւէն , քանի մը տրամ կասի , երկու մեխակի հատիկ , եւ ասոնց վրայ լեցնել երեք օխա ալքոլ . ապա շիշին բերանը խցելով ամիս մը արեւուն տակ դնել : Յետոյ լաթէ մը անցընել , եւ մէջը մէկուկէս օխա կարած շաքար խառնել : Նորէն բարակ պարզուտէ մը անցընել , ու յետոյ սրուակներու մէջ լեցնելով անոնց բերանը խցել : Եթէ թուրինջ չգտնուի , պարզ նարինջով ալ կ'ըլլայ :

Բազմապսուղ ըմպելի . — Պէտք է առնել 250 տրամ աղէկ բալ , կոթերը հանել . առնել նաեւ 250 ական տրամ ելակ , հաղարջ եւ արքայամոր , ամէնքը մէկէն օխա մը լաւ տեսակ քօնեաքի մէջ լեցնել ու արեւուն տակ դնել վեց ամիսի չափ : Յետոյ ջուրը առնել պարզուտէ անցընելով , եւ հետը խառնել 125 տրամ կարած շաքար :

Բալի բնագիւի . — Երեք հարիւր տրամ կտրած շաքարի մէջ քանի մը հատիկ մեխակ , կտոր մը կասի եւ երկու օխա քօնեաք կամ ալքօլ խառնել , եւ ամէնքը մէկէն լեցնել մէկ օխա քիչ մը տհաս բալի վրայ . բաւերուն կոթերը պէտք է կէս կէս կտրել կանխաւ , եւ արեւուն տակ դնել շիշերուն բերանը լաւ մը խցելէ յետոյ :

Սալորի բնագիւի . — Պէտք է առնել աղէկ տեսակ սաւոր ոչ շատ հասուն , խոշոր գնդասեղով մը կուտերը մէջէն խախտել , եփ ելած ջուրի մէջ նետել , մաղ շերտիով անմիջապէս հանել եւ սպաղ ջուրի մէջ լեցնել , եւ անկէ ալ հանելով ջուրը ծծել տալ լաթի մը վրայ ու շիշի մը տակը շարել , շաքարը կտրել , ալքօլով խառնել եւ վրան լեցնել :

Միրանի բնագիւի . — Միեւնոյն կերպով կ'ըլլայ ծիրանի բնագիւին :

Նարինջի բնագիւի . — Պէտք է նարինջին վրայի կեղեւը շատ բարակ սակել եւ ալքօլի մէջ ձգել քանի մը ամիս , յետոյ կտրած շաքարը եւ ալքօլը փափաքուած չափովը իրար խառնելով , մէջը աւելցնել յիշեալ շիշին պարունակած ալքօլէն հարկ եղածին չափ :

Այս կերպով կը պատրաստուին բոլոր իֆսիւրները , ինչպէս մանսարինը , կիտրոնը , պեղրամոդր , միսֆեթ շեմոնը . դալով վարդին ու մանիշակին , պէտք է անոնց ծագիկներուն թերթերը ալքօլի մէջ ձգել :

ՔԻՉ ՄԸ ԳԱՆԿԱԲԱՆՈՒԹԻՒՆ


Գանկարանութեան հնարիչն է ժան-ժօզէֆ Կալ (1758—1828) : Այս գերման բժիշկը ուղեղը կը բաժնէր զանազան մասերու , որոնց կը վերագրէր հոգեկան կարողութեանց համապատասխանող զանազան պաշտօններու Ըստ իրեն , զանկին դուրս ցցուած կամ փոսացած մասերը կը համապատասխանեն ուղեղին զանազան մասերուն զարգացած ըլլալուն կամ չզարգացած մնալուն . եւ քանի որ իւրաքանչիւր կարողութիւն , իւրաքանչիւր բնազդ կը համապատասխանէ ուղեղին զանազան մասերուն , այս կերպով կարելի է գտնել քննելով հասկնալ թէ այս կամ այն մարդուն ներքինը ի՞նչ է : Պէտք է ըսել սակայն թէ Կալի գրութիւնը պարզ ենթադրութիւն մըն է , եւ թէ հակառակ Արքրզայմի , Գիւպիի , Սոլէրի եւ ար Պրուսէի աշխատութեանց , այս ենթադրութիւնը ո եւ է զիտական հիմ չունի :

Գաղափար մը տալու համար Կալի գրութեան վրայ , հոս կը գնենք այն զանազան յասկութիւնները , որոնք կը համապատասխանեն թիւ 21 պատկերին մէջ ցոյց տրուած զանկի մասերուն :

Ա. Անասնակիսն կարողութիւններ. — 1. Ֆիզիքական սէր , որ կը չափուի մէկ ականջէն միւսը : 2. Զուակնեւրու սէր , տկարներու պաշտպանութիւն : 3. Գաղափարներ , զգայութիւններ ինք իր մէջ կեդրոնացնել : 4. Մարդուս յարումը իր երկրին : 5. Մարդուս յարումը անհասներու կամ իրերու : 6. Քաջարտութիւն , յարձակումներու զիմազրութիւն : 7. Արտորդի տրամադրութիւն : 8. Շատակերութիւն , գինովութիւն : 9. Խորա-

մանկութիւն , քան ծածկելու տրամադրութիւն : 10. Մե-
փականութեան սէր , ընչասիրութիւն , կտութիւն : 11.

Պատկեր 21



Ճակատ եւ դէմք

Գանգիւն վրայի
կողմը

Գլխուն ետեւի
կողմը

Կիսադիմք

Այս պատկերներուն թիւերը կը համապատասխանեն
նշանակուած կարողութեանց

Շինելու , կարգադրելու կարողութիւն , նորթիկներէն
սկսեալ մինչեւ քանդակագործները :

Բ. Զգացական կարողութիւններ. — 12. Հպարտու-
թիւն , յարգանք ինքզինքին համար : 13. Իր անձին
նկատմամբ նպաստաւոր կարծիքներ լսելու փափաք ,
ունայնամտութիւն : 14. Շրջհայեցութիւն : 15. Բարե-
սիրութիւն : 16. Մեծարանք , որդիական կամ կրօնական
երկիւղածութիւն : 17. Նկարագիր (հաստատամտութենէ
մինչեւ յամառութիւն) : 18. Յոյս : 19. Արդարութիւն ,
ճշմարտութիւն : 20. Գերբնականին ճաշակը : 21. Բա-
նաստեղծական ճաշակ : 22. Վսեմին սէրը : 23. Զուար-
թութիւն , սրամտութիւն , յանկարծարանութիւն : 24.
Նմանողութեան հակում :

Գ. Մտաւորական կարողութիւններ. — 25. Անհատա-
կանութիւն , մանրամասնութեան զիտողութիւն : 26.
Զեւերու , նմանութեանց յիշողութիւն : 27. Տարածու-

թիւնը հասկնալու կարողութիւն : 28. Կշիռը , մեքենա-
կանութեան մէջ ընդդիմահարութիւնը հասկնալու կա-
րողութիւն : 29. Գոյները ճանչնալու կարողութիւն : 30.
Ճամբորդելու փափաք , տեղերու յիշողութիւն : 31.
Թիւեր , հաշիւ : 32. Կարգ կանոնի սէր : 33. Հետեւու-
թիւն հանող միտք : 34. Ժամանակը չափելու կարողու-
թիւն : 35. Ներդաշնակութեան հասկացողութիւն : 36. Լե-
զուներու համար զիւրութիւն , բուն բառին յիշողու-
թիւնը (այս կարողութիւնը ունին մանաւանդ անոնք
որոնց աչքերը դուրս ինկած են) : 37. Բաղդատութիւն :
38. Արդիւնքներու եւ պատճառներու յարաբերութիւնը
հասկնալու կարողութիւն , իմաստասիրութիւն , բնագան-
ցութիւն :

ՔԻՉ ՄԵ ԳԻՄԱԳԻՏՈՒԹ ԻՒՆ

« Գէմքը հոգւոյն հայելին է », կ'ըսեն : Այս առա-
